

# Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

## ԱՐՁԱԳՈՆԳ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍՈՒՊՐՈՒԹՅԱՆ.

Ա. Տարի. Թիւ. 11 Հասարակի ամիսը Երկու ամիսով, ստեղծած խոսք ճարտար: Գործակալ. — Քարկ, Ազգայ Քեարտիստ, 27, rue de Fieorus. 1859 Յուլիս 1.  
— Պոլս, . . . . . — Իզմիր, Ազգայ Արհիտեքտ. — Սեբաստ, Ազգայ Յեւ Գուտարեւոյ Սղարտ:

### ԲՈՆԱԿ ԻՒԱԼԻՒՅՔԻ.

#### Օրակաւն պատմութիւն

##### Զինուորք.

Կուզամ իբրև պարտադրուի գձեզ պատերազմի տանկրու համար: Չտնտաւ և մարտակից պիտի բլլանք ժողովուրդի մի որ իր' անկախութիւնը կը ինզրէ, և պիտի ազատենք զանկիս օտարին բռնակալութիւնէն: Սուրբ կախ. մ'է այս և բոլոր բազաբակիրք աշխարհին համակրութիւնը կ'ընդունի:

Հարկատրութիւն չ'ունիմ ձեր եռանդը գրգռելու. ամէն կայան մէկ յաղթութիւն յիշեց պիտի տայ ձեզի: Հին Հուով Եսկրական սրագոտային մէջ անկիւ նշանագիրներ կային, կիսի վրայ վարագրուած, ժողովուրդին միտքը ձգելու համար բրած երեւցի գործերը: Կոնստանտնուպոլիս, Մարտի, Կաթակոյն, Արքայ, Քիւթայի, զաշտերէն անցնելու աստն ուրիշ Եսկրական սրագոտայի մէջ պիտի քայլէ չորս կողմը վառուար յիշատակներով լի:

Պանկեղ'ք ձերխառն հրահանգը որ բանակի մի պատման է: Հոս, միտքերնէզ մի' հանէք, օտանք միտքն Յշնամի են որ ձեզի գէտ կը կատին: Պատերաւ ի դաշտին վրայ անլուծելի մնացէք, մի' բաժնաւոր և մի' թողուք ձեր կարգերը առաջ նետուելու համար:

Կարի մեծ աշխարհէ մը կատկածեցէք. ինծի համար հոն է վառանգը և կը վախմտամ որ ինք զինքնիդ բանելու չպիտի նուաք:

Կորսնեար ծիշզ զկերերը հետուէն միայն վառանգաւոր են. սակայն անոնք չ'են արգիլել որ ստիկը, ինչպէս առաջ, հիմակ ալ Ծրանապի հետեակ զօրքին զարհուրելի գէտք բլլայ:

Զինուորք, ամէնքս մեր սրարտքը կատարենք և Ստանուոյ վրայ կեննք մեր վառանգութիւնը: Հայրենիքը շատ բան կ'ապառէ ձեզմէ: Արդէն Ծրանապի մէկ ծայրէ միտք կը հնչեն այս աւետայի խօսքերը. Կապիկայի նոր բանակը իր անդրանիկին արժանի բոցը պիտի բլլայ:

Յէնը, 12 Յուլիս 1859.

ՆԱՐՈՒԹՅԱՆ.

### Ե գրակարսակ

##### Զինուորք.

Կայրը ձեզ հրահանգելու պատիւը կը շնորհէ ինձ: Եստերը ձեզմէ Ս. բնայի և Ինքերմանի բնկերքս են: Ինչպէս Քրիստի, Աֆրիկէի մէջ, նոս այ ձեր վառուար համբաւին արժանի պիտի բլլի: Հրանանգ, բազմութիւն, սիրութիւն անա զինուորական առաքինութիւնները որք նորէն Եւրոպայի պիտի յայնմն գձեզ, Եւրոպային' որ ուշադիր կը կայի կատարելիք վէպերու վրայ: Այն երկիրը որ խանձարուք եղաւ վաղեմի բազաբակիրքութեան և արգիլիքածուցեան, ըրցէն ձեզ պիտի պարտաւորի իր սպասութիւնը: Ետրաւ. պիտի ազատէք զայն իր իշխաններէ, Ծրանապի յաւե՛մ Յշնամիներէն' որոնց անունը կը



խտանուի, մեր պատմութեան մէջ, մեր ամէն կռիւներու և յաղթութիւններու հետ :

Իդալեան ժողովուրդներու ընդունելութիւնը, զոր կ'ընեն իրենց ազատիչներուն, վկայ է որ Կայսրը արդար խնդիր մը պաշտպանելու ձեռք զարկաւ :

Ապրի կայսրը, ապրի Փրանսայ, ապրի Իդալեան անկախութիւնը :

Իշխան հրահանակայ Ե գուսարսակի  
Իդալեան բանակին

ՆԱԲՕԼԷՕՆ (ՅԷՐՕՄ)

Ինչպէս վերի երկու հրատարակումներէն կը տեսնուի վեհափառ Կայսրը և բարձրապատիւ Նաբօլէօն իշխանը արդէն Իդալիա կը գտնուին : Վ. Կայսրը մայրաքաղաքէն մեկնեցաւ ամսուս 10ին և, Մարսիլիայէն անցնելով, Փենուս հասաւ 12ին, կէս օրէն հտն :

Անհնարին է նկարագրել այն կարգէ զուրս ամբօխը և համակրութիւնը որք թէ հոս և թէ հոն իր բոլորտիրը կ'եռային : Աւելի զիւրին է ընծերցողին երեակայել բան թէ մեզ պատմէր Կայսրը, իբրև կենդանի և նուիրական պատկեր ազատութեան և անկախութեան, կը հռչակէր, կը փառաւորուէր, կ'օրհնուէր : Թշնամիք, կուղինք ըսել անտարբէրք անգամ, վասն զի այսպիսի պատե-րազմի առեւ Աստրիայէն ուրիշ թշնամի չկայ, անտարբէրք անգամ կը զօղէին : Ապրի Փրանսա, ապրի Իդալիա ... :

Վեհափառ կայսրը, մեկնելէ առաջ, երկու մասնաւոր հրովարտակով տէրութեան սանձը Կայսրունիին և իր հօրեղբոր յանձնեց : Ածուակալութիւնը որոշ թէ-ութիւններով պիտի կատարուի և Վ. Կայսրունին միշտ անոնց հնազանդելով պիտի իշխէ : Վճիռ մը տալէն առաջ պիտի հարկադրուի բարձրապատիւ Փէրօմ իշխանէն խրատ անուղ և ըստ այնմ վարուիլ :

Ածուակալ Կայսրունին նախագահ է ոչ միայն զանլիճին այլ և մասնաւոր Խորհուրդին : Սթէ զիսմամբ չկրնայ իր նախագահութիւնը վարել, Բ. Փէրօմ իշխանը իր տեղը պիտի բռնէ :

Վեհափառ կայսրը իր բանակատեղին Ալէքսանդրիա տարաւ և մինչև այս ժամը հոն կը գտնուի :

Բ. Նանքօլէօն իշխանը Փենուս կը մնայ և իր բանակը կը կարգադրէ : Կըսուի թէ 40,000 զինուորէ պիտի բաղկանայ այս բանակը և ութ օրէն պիտի առաջ քալէ :

Հ Ի Ի Ս Ի Ս Ա Փ Ս Յ Լ

Հիւսիսայնային առնելով հոս կը դնենք երկար յօ-դուած մը որ մասնաւոր ուշադրութեան արժանի է և որ Պ. Գ. Այվազովսքիին վարքին վրայ նոր լոյս մը կը ծա-ւալէ : Այս յօդուածին հարկաւորութիւն է' օնէինք Ռու-սիայի մէջ եղածը հասկնալու համար. մեր անձնական տեղեկութիւնները մեզ կը բաւէին : Սակայն յարգի վկայ մը միշտ ընդունելի է և շնորհակալ ենք Հիւսիսայնային որ այս վկայութիւնը բերաւ մեզ : Յուսանք թէ ուրիշ վկաներ ևս չպիտի պահուին : « Ի բազում վկայից հաս-տատեսցի բանն » ձշմարտութիւնը կազ է, այն, բայց ոչ հաշմ :

Շատ ծանր բան մի է մարդու համար ընդունել, եթէ նորան ցոյց տալով մի թերթ սպիտակ թուղթ, ասէին, թէ սև է այդ թուղթը, մինչդեռ այն մարդը որին ցոյց էին տալիս, ասին յայնտի տեսանում էր թղթի սպիտա-կութիւնը : Այս դրութեան մէջ գտնվում ենք ներկայ ժա-մուսն մեք բոլոր Հայերս. մեզ կամին հաւտացնել, որ երկու անգամ երկուն չորս չէ, այլ մի ուրիշ թիւ, և համարեա թէ համարձակվում են կատարեալ հաւատ պահանջել մեզանից այդ եղջերուաքաղի վրայ : Ամե-նայն առողջ մարդկային դատողութեան հիմքի վրայ ար-ժան է, որ չընդունողը այդ սպիտակ թուղթի սևութիւնը, գովասանութիւն ստանար, որպէս մի ճշմարտասէր անձը. բայց արի տես, որ դարձեալ դատապարտվելու ենք մեք ստութեան սպասատրներին ձեռքով, որպէս չարագործ : Մեր ճշմարտութիւնը է մեր դատակիթը : Սև չզիտեմ այս կերպով, սր տեղ պիտի հասնի մեր ազգի բանը. ոչ, ով սիրտ չունի միտ դնել ճշմար-տութեանը, փոքր ի շատէ պատուել զորան. աշ-խարհի թերութիւնը, որ ցիր և ցան երեւում են ուրիշ ազգերի մէջ, այս բոպէիս ասես թէ հաւաքված են մի տեղ մեր ազգի մէջ. դարձեալ չափվում է ճշմարտու-թիւնը բարեկամութեան և թշնամութեան չափով, դար-ձեալ մի իշխանաւորի, մի հարստականի պակասաւո-րութիւն, տեսաբանական խաբէութեամբ, երեւում է որպէս մի կատարելութիւն : Արդեօք լուսանայն է միանգամ առողջ բանականութեան օրը և մեր ազգի վրայ, թէ դատապարտված ենք մեր սրտի ցաւով հան-դերձ զորվիլ անմխիթար դէպ ի գերեզմանի խորքը : Ձշմարիտ, նայելով Հայոց ազգի բաների ընթաց-քին, ասես թէ վերջինս ասիլի հաւանական էր : Շատ անգամ դանդաղու է լինում մարդ խօսել մի սպիրտաւորութեան վրայ, որովհետև ձանձրանում է վեր-ջապէս լեզի խառնելով իւր կեանքի մէջ ամենայն օր, բայց այդ լուսութիւնը չարաչար գործ դնելով ուրիշները,





ղեկացած կը լինէր մինչև այժմ: Բայց այդ գործի վերջաւորութեան վերայ խօսելուց յառաջ, մեր ազգի ընդհանուր տեղեկութեան համար, հարկաւոր է խօսել այդ գործի սկզբի վերայ, որ է այդ արձաժազուլութեան անցանելը դէպ ի Պ. Խալիբեանցի ձեռքը:

Չկամինք այս տեղ յիշել թէ Ներսէս կաթողիկոսը իբրև վիճակաւոր առաջնորդ 1852 մինչև 1844 թուականը ինչ յարաբերութիւն է ունեցել Պ. Խալիբեանցի հետ. այդ մի երկար, թէ և հարցասիրութեան արժանի պատմութիւն է, որ հասել է մեզ նոյն կաթողիկոսի ձեռագիր նամակներով, որ ուղղած էին դէպ ի Նախիջեւանի Հոգևոր կառավարութիւնը, քաղաքական խորհրդարանը և դէպ ի Պ. Խաչատուր Մկրտչեան Խումսճեանը: Գուցէ մի այլ ժամանակ, բոլորովին այլ հանգամանքներու մէջ..... երկին այդ նամակները և մեր ազգը աւելի մտնրամտն ծանօթութիւնը ստանայ շատ բաների մասին, որ մինչև այժմ այլապէս էր ճանաչել: Այն, մէք խոստանում ենք այդ, եթէ յաջողի մեզ տպագրական մամուլի տակ ձգել մի ժամանակ « մեր տեսած ու լսածը » որ բովանդակում է իւր մէջ մեր ազգի ժամանակից ճիշդ պատմութիւնը: Այսքան պիտի ասել, որ 1844 թուականի Ներսէս արքեպիսկոպոսը կաթողիկոսացած, Պետրբուրգից Գլխինեղ վերադառնալով, գրաւոր յանձնարարութիւն արեց Պ. Խալիբեանցին ժողովել էկեղեցական ցիր և ցան արձաժազուլութեան կարգի բերել այդ բոլորը մինչև իւր գալը: Այդ նամակով հաշտուի էր Կաթողիկոսը Պ. Խալիբեանցի հետ. պատճառ, իրաւել էր իր յարաբերութիւնը Պ. Խումսճեանի և Սեթեան Խաչատուր աւագ քահանայի հետ.....:

Եւ անա Պ. Խալիբեանցը հաւաքեց արձաժազուլութեան և երբ 1845 թուականի հոկտեմբերին, կաթողիկոսը էջմիածին գնալով հանդիպեցաւ Նախիջեւան, նորա բարեկամութիւնը ամրացաւ կրկին կապով: Հաւաքված էկեղեցական արձաժի որքանութիւնը յանձնուեցաւ վերստին Պ. Խալիբեանցին, վերատեսուէչ նշանակվեցաւ նա էկեղեցական գործերի, երեսփոխանքը հրաման ստացան նորան հասուցանել այնուհետև էկեղեցիների տարեկան էկամուտքը, նորա ձեռք յանձնվեցաւ Սուրբ Խաչ վանքի կառավարութիւնը, նորան հրամայվեցաւ ստանալ մտնի մեկնափաճառութեան տարեկան գինը: Այս կերպով Պ. Խալիբեանցը դարձաւ մի տեղակալի կամ փոխանորդի նման բան մինչև 1848 թուականը: Պիտի ասել որ այդ թուականը ևս Պ. Խալիբեանցի ոսկեղէն տարիներէիցը մինն էր, որովհետև շատ յաջողակ էր նա և որպէս քաղաքագլուխ (1):

(1) Պ. Խալիբեանցը 12 տարի վարեց քաղաքագլխի պաշտօն, առանց ենթարկվելու հասարակութեանը, և առանց հաշիւ տալու, որի գործը մինչև այսօր դեռ ևս չէ վերջացել և Պ. Խալիբեանցը մինչև այսօր դեռ ևս իւր անտեսութեան հաշիւը չ'է

1848 թուականի ապրիլի 7 ին Նախիջեւան էկաւ նոր նշանակված Թեմակալ առաջնորդը և տեղեկանալով հոգևոր կառավարութեանից, թէ մօտ իւր Խօթանասուն հազար մանեթ էկեղեցական արձաժ գտնվում է Պ. Խալիբեանցի կառավարութեան տակ, շատ անգամ լսեց ժողովրդի բերանացի գանգատը և գրաւոր խնդիրը այդ արձաժազուլութեան օրինաւոր կերպով տնօրինելու մասին: Թէպէտ վիճակաւոր արքեպիսկոպոսը ուղղակի պարտական էր, որպէս լիակատար Թեմակալ առաջնորդ, իսկայն հաշիւ պահանջել Պ. Խալիբեանցից էկեղեցական արձաժագլխի մասին և տնօրէնութիւն գործել ինչ պէս հրամայում էին օրէնքը, ..... բայց լաւ ուսած լինելով Կաթողիկոսի ինքնիշխան և անստատախանատու բնաւորութիւնը, ծուղծ զրեց և հայց արեց Կաթողիկոսից այդ արձաժագլխի մասին: Կաթողիկոսը, 1848 թուակ. յունիս ի 20 ից 160 համարով, կոնդակ է գրում և մեղադրում է վիճակաւոր արքեպիսկոպոսին, « թէ ինչպէս կարողացար դու մտածել, որ Ներսէս Կաթողիկոսը արձաժ կարող է տալ մի մասնաւոր մարդու: » Այսպիսի հանգստեան շարականից յետոյ պարտականութիւն է դնում արքեպիսկոպոսի վրայ յայտնել ինքեան թէ « ուստի զիտէր նա, և ո՞վ էր ասել նորան, թէ Ներսէս Կաթողիկոսը էկեղեցական արձաժ է տուել ում և իցէ: »

Այս իրողութեանից յետոյ, արքեպիսկոպոսը պահանջեց Պ. Խալիբեանցի հաշիւ և Կաթողիկոսի յանձնարարական գիրը, որի մասին ասել էր Պ. Խալիբեանցը թէ ունի: Պ. Խալիբեանցը երկու ամիս ժամանակ կորուսանելուց յետոյ, տուեց առաջնորդին իւր հաշիւը 1848 թուակ. յուլիսի մէջ. բայց ցոյց չտալով իր կոնդակը և առանց առաջնորդի գիտութեան քանդեց Սուրբ Խաչ վանքի սենեակները և Սուրբ Թէոդորոս էկեղեցու պարիսպը, պատճառելով թէ նորուց կամի շինել: Առաջնորդը բողբում է Կաթողիկոսին Պ. Խալիբեանցի այս պիտի ընծայքի վերայ, բայց Կաթողիկոսը, իրաւանակ մի պարզ բան գրելու, լցնում է կոնդակը սուրբ զրբի վկայութեաներով, շարականներով և առանձներով և նախատում է արքեպիսկոպոսին, բայց այս անգամ այն պատճառով, թէ ինչպէս համարձակվիլ է առաջնորդը հաշիւ պահանջել Պ. Խալիբեանց այն արձաժագլխի համար, որ ինքը, միլիօնաւոր Հայերից ընտրած ընդհանրական Պատրիարքը, յանձնել էր իւր հարազատին...:

տուել հասարակութեանը. այս տեղ ևս հասարակութիւնը մեծ պահանջելիք ունի: Չեմ ասում դեռ այն, որ այդ պարտնը հասարակութեան հողի վերայ շինուածք շինելով ինքեան էր սեպհականել, պատճառելով թէ տանաւեայ հնութիւնը անցել է և ոչ ոք պահանջել չէ այդ տեղերը. ո՞վ կարող էր պահանջել մինչդեռ ինքն էր քաղաքագլուխ. Անցեալ 1837 թուականին կառավարութեան կողմից կոմիտէտ նշանակվելով պարտաւորվեցաւ Պ. Խալիբեանցը, բայց այդ գործը դեռ ևս չ'է աւարտվել:





ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ .

— Այս ամսու մէկին Բարմային ժողովուրդը ոտքի էրաւ և Իդալիայի անկախութեան համար իր համակրութիւնը յայտնեց : Բանակին պաշտօնաւորք՝ բոլոր զինուորներուն բերնէն , ուղեցին Սարտենեան բանակին հետ միանալ և Աւարիայի դէմ պատերազմիլ : Գըքսուին մերձելով՝ ստիպուեցաւ քաշուիլ և իր տերութիւնը ածուակալ ժողովի մը յանձնեց : Այս յեղափոխութիւնը , ինչպէս նաև Թօքսանայինը , անշիտի կատարուեցաւ ու մինչև այս րոպէ հանդարտութիւնը կը տեսէ : Ազգային սէրը ոչ միայն իդալեաններու խոհեմութիւն կուտայ այս անգամ այլ և միասիրտ արիւթութիւն : Վճարուի Թէ Դքսուին Մանգու սպառնալէր է և Թօքսանայի մեծ Գուքսը արդէն Վիէննա կը գտնուի :

— Ֆրանսայի տէրութիւնը , դարձանայի արագութեամբ , զինուոր կը տեղայ Սարտենիայի մէջ : Թէ ցամաքէն և Թէ ծովէն զրկուած զօրքին թիւը , մինչև մայիսի 4ը յիսուն հազարէն աւելի է : Քանի մը օրէն այս թիւը հարիւր հազարի պիտի հասնի և անցնի : Մարեշալ Պարակէ տիւրէն , որ Ա. բանակին հրամանակալն է , հետագայ պատուէրը կը հրատարակէ :

Զինուորք .

« 1796ին և 1800ին Ֆրանսայի բանակը , զօրապետ « Նարթէօնի հրամանին ներքև , Իդալիայի մէջ փա- « ւաւոր յազմութիւններ ըրաւ նոյն թշնամիներու վրայ « որոնց դէմ կը զինինք : Շատ վաշտեր Զարհուրելի և « Անպարտելի մականունը ստացան զոր ձեզմէ ամէն « մէկը պիտի աշխատի իր զրօշակին շնորհել իր քա- « ջութեամբ , սննդութեամբ և հնազանդութեամբ : « Զինուորք , վստահութիւն ունեցէք վրաս ինչպէս « վստահութիւն ունիմ ձեր վրայ : Երեւինք արժանի « Ֆրանսայի , Վայսեր , և օր մը թող ըստի մեզի հա- « մար՝ ինչպէս մեր հայրերուն՝ իբրև համառօտու- « թիւն իրենց փառքի տխրասներու . Խրալիայի բա- « ւակեկ երևա : »

ՊԱՐԱՎԷ ՏՒԼԻԷ .

— Բարիդի օրագիր՝ մը հետագայ տեղեկութիւնները կը հրատարակէ :

Բոլոր Իդալիայի ժողովուրդը , ինը տէրութիւններու մէջ որով այն կը բաղկանայ , 26 միլիօն հոգիի կը հասնի : Ազգահամարը կը հաստատէ որ սարուէ տարի այս թիւը աւելնալու վրայ է : Երարու վրայ հաշուելով ամէն տարի զրեթէ 680,000 հոգի կը զիղուի 26 միլիօնին քով : Նո՛է այս անուճը շարունակուի , տարակոյս չկայ որ Իդալիա Ֆրանսայի չափ բազմաթիւ ազգ ըլլայ քսան երեսուն տարիէն : 26 միլիօնին մէջ 2,220,000 տասնէն մինչև երեսուն տարեկան արու կը հաշուի , որ մէկ եթէ հինգերորդ մասը անպիտան համբէնք կը մնայ

1,780,000 էրիտասարգ զէնք կրելու և պատերազմելու կարողք : Հաշտութեան ժամանակ բանակը 190,779 զինուոր ունի , պատերազմի ստեն 512,949 :

Սարտենիան ունի , 112,155 մարդ . 4,264 ձիաւոր , 1,510 ուժաւոր :

Նարբիա ունի , 145,262 մարդ , 9,850 ձիաւոր , 8,208 ուժաւոր 558 թնձանօթով :

Թօքսանա ունի , 18,275 մարդ , 459 ձիաւոր և 695 ուժաւոր :

Բաբի տէրութիւնը ունի , 19,575 մարդ , 706 ձիաւոր և 1,259 ուժաւոր :

Մօտէնա ունի 5,500 մարդ , Բարման , 4,150 :

Բաց ասկէ 80,000 իգալեանք Աւարիայի բանակին մէջ կը գտնուին : Ընդ ամէնը կընէ ուրեմն զրեթէ 400,000 զինուոր :

Նարբիայի , Հոռմայի , Աւարիայի բանակին մէջ ծառայողներէն յոյս չկայ առ այժմ . Կը մնան ուրեմն Սարտենիայի զօրքը և Թօքսանայի , Բարմայի , Մօտէնայի պղտի բանակները որք մէկ տեղ գալով կը շինեն զրեթէ 140,000 մարտիկի գունդ մը : Կարիպալտի դօրավարին գունդը քսան հազար կամաւորէ կը բաղկանայ , կ'ըսեն . ուստի ընդամէնը կընէ 160,000 հոգի : Մէկ այս չափ ալ Ֆրանսան օգնութիւն զրկէ նէ Եւրոպայի վերջին բանակալը իր յանդգնութեան չափը կ'ընդունի և ազատութիւնը նորէն կը մտնէ յաղթանակաւ այն վեհ քաղաքներու մէջ որք կարգ ըստ կարգէ աշխարհիս ամենէն երեւելի կայանները եղեր են .

— Պուա զօրապետը յանկարծակի մեներ է Սիւզա քաղքին մէջ , ուր նոր հասեր էր իր գունդերով : Սիւզա Թիւրքիօնէն շատ հեռու չէ : Պատերազմի գաշտին քով մեռնիլ իրեն նման քաջի մի համար զմբաղդութիւն կրնայ սեպուիլ : Բարիդի օրագիրները իր վրայ մեծ գովեստ կը հրատարակեն :

— Լուի-Ֆիլիպ Թագաւորին թոռը , որ Սարտենիայի զինուորական վարժատունէն երկուով նոյն տէրութեան բանակին մէջ կը ծառայէր իբրև երկրորդ տեղակալ՝ չէ ուղեր իր պաշտօնը թողուլ , և պիտի պատերազմի Իդալիայի ետագոյն զրօշին ներքև Աւարիայի դէմ : Այս իրեն պատիւ կ'ընէ :

— Մօնիքօրը կը հրատարակէ պաշտօնական փոփոխութիւններ որք նշանակելու արժանի են : Մարեշալ Բանատը կը յաջորդէ , իբրև պաշտօնեայ պատերազմի , մարեշալ Վայլենի որ Իդալիայի բանակին մեծ-զօրապետ կ'անուանի : Պ . Տըլանիկը կը յաջորդէ , իբրև արգարութեան պաշտօնեայ , Պ . Բուալին որ Մերակոյտին երկրորդ նախագահ կ'ընտրուի : Գուքս տը Բատուն կը յաջորդէ Պ . Տըլանիկին որ էր ներքին զօրձերու պաշտօնեայ :

— Աւարիայի բանութիւնը ոչ միայն քաղաքական իրերու վրայ կը ծանրանար , ոչ միայն ազգութիւնը





յաւիշտակել և ճրխ բանակը կերակրել տալ թշուազիւ-  
ղերու ունեցածովը, իրենց օրինաւոր քան կը թուի :  
« Աւստրիայի տէրութիւնը մարդկային ազգի ամօժն է »  
ըստ Եր Մեսգր, և ժիուլէ զօրապետին ըրածները այս  
խօսքը կարողարացնեն վերջին անգամ, կը յուսանք :

Պաշտօնական օրագիրը Պ. Ֆուլտ, Տէրութեան պաշ-  
տօնէային նամակը կը հրատարակէ որու մէջ կ'ընծեր-  
ցուի . « Կառաջարկեմ ձեր Վեհափառութեան  
Պ. աը Հօմպօլտին յիշատակը պատուել իրեն արժանի  
շուքով մը և վճուել որ իր արձանը դրուի Վերսայի  
Թանգարանին մէջ : Այսպէս մանր չսլիտի բաժնէ  
ղինքը այն երևելի անձերէ որք իրեն զարմացողք և  
բարեկամք եղեր են : » Այս աղնիւ առաջարկութիւնէ  
ետե Վ. Կայսեր հրովարտակը կուգայ որով Պ. աը  
Հօմպօլտին արձանը շինուելու հրամանը ի լուր  
աշխարհի կը յայտնուի :

Հանճարը հայրենիք չ'ունի ըսողը մեծ ճշմարտու-  
թիւն մը ըսած է որ հիմա կը կատարուի Ֆրանսայի  
մէջ և որ, ժամանակով, սլիտի կատարուի բոլոր լու-  
սաւորուած ազգերու մէջ :

— Անգղիայի Վեհափառ Թագուհին մասնաւոր հրո-  
վարտակով աղղ կ'առնէ ժողովուրդին որ իր տէրութիւ  
նը չեղոք սլիտի մնայ Եղալիայի պատերազմին առեւն :  
Այս չեղորութիւնը խստիւ իգործ սլիտի դրուի և Անգ-  
ղիայի ժողովուրդը ու հպատակ ազգերը որ անոր դէմ  
չկը վարուին, այսինքն մէկ կողմին կամ միւսին ձեռն-  
տու կ'ըլլան, ամէն իրաւունքը կը կորուստնեն և չեն կըր-  
նար պաշտպանութիւն մը յուսալ տէրութիւնէն :

— Կ'ըստի թէ՛ երեքնարիւր Յոյն, Յոնիական կղզիներ-  
ըն, Սարտենիայի տէրութեան առաջարկեր են զինուոր  
գրուիլ և անկախութեան համար պատերազմիլ : Արդէն  
յոյն բանակէն պաշտօնաւոր մը Թուրինօ հասեր է և իր  
պաշտօնով բանակատեղին կը գտնուի : Ինչպէս կ'ե-  
րեի յոյները այնքան ապերախտ չեն որ իզպականներուն  
իրենց համար ըրածը մոռնան :

— Աւստրիայի տէրութեան արտաքին գործերու պաշ-  
տօնէայ՝ Պ. Պիօլը իր հրաժարումը տուաւ, բայց ան-  
յայտ է թէ ինչ պատճառով : Պ. Պիօլը երևելի և տա-  
ղանդաւոր անձ մ'է և իր կեանքը քաղաքականութեան  
մէջ մաշեր է :

Իր յաջորդին անունը է Պ. Բէկպերկ՝ նախագահ  
Ֆրանքֆորթի ժողովին :

— Պ. Է. Ապուն, մեր սիրելի բարեկամը, որ քիչ ժա-  
մանակի մէջ այնքան աղնիւ վէպեր հրատարակեց և  
որ մեծ համբաւ ստացաւ բոլոր Եւրոպայի մէջ, խնդիր  
Համեակական անունով գիրք մը շիներ է բարութեան դէմ :  
Եթէ մէզուիծներու բարկութիւնէն դատելու ըլլանք այս  
զլբքին արմէքը, կը տեսնենք որ իր հարուածները  
սասախիկ են : Պ. Է. Ապուն Մօսկոյի շարագիրներէն  
մէկն է և ասիկէ տարի մը առաջ մասնաւոր պաշտօնով

Հոսմ գացած էր : Մեր երևելի բարեկամին գովեստը  
ուրիշ անգամի կը թսղունք և խնդիր Համեակակնը մաս-  
նաւորապէս կը բնենք ժամանակին :

— 500, միլիօնի փոխը բանի մը օրի մէջ կուտար-  
ւեցաւ : Բաժանորդներու թիւն այնքան մեծ էր որ, եթէ  
տէրութիւնը ուղէր, եռապատիկը կրնար ժողուել : Հինգ  
հարիւր միլիօն խնդրեց հասարակութիւնէն և ժողո-  
վուրդը իրեն կը բերէ երկու միլիար երկու հարիւր յիստն  
միլիօնի չափ : Ինչ հարստութիւն և ինչ հայրենասիրու-  
թիւն : Արժա՞ծ պատերազմի շիրջն է ըստ մէկը . յայտ-  
նի կը տեսնուի որ գոնէ այս շիրջն չպակսիր Ֆրանսայի  
բանակին . Թո՞ղ իր դաւակներու անզուսլ աշխոյժը և  
անպարտելի քաջութիւնը..... :

— Պ. աը Թուլիէլի կայսերական հրովարտակով Մեր-  
կոյտի անգամ եղաւ և կը պատրաստուի, կ'ըսեն, Պօլիս  
դառնալու շուտով : Կայսեր համարումը, իր դեսպանին  
վրայ՝ շատ մեծ է, ինչպէս որ իր հրովարտակէն ալ կը  
յայտնուի :

— Սուէզի պարանոցը բանալու խնդիրը արդէն լուծուեր  
է հիմա : Հանդէսէ մը ետք՝ գործաւորները սկսեր են  
աշխատելու և ամէն մարդ կը յուսայ որ այս մեծ ձեռ-  
նարկութիւնը յաջողակի կը կատարուի :

— Պաշտօնական օրագիրը, մայիս 11 թուականով, կը  
հրատարակէ Պ. աը Բէրսիյնիին դեսպան դրուիլը ի  
Լօնտրա Մարեշալ Բէլիսէին տեղ : Պ. Կոմս աը Բէր-  
սիյնին հիմա Լօնտրա հասած սլիտի ըլլայ : Իր դեսպա-  
նութիւնը յոյս կուտայ որ Ֆրանսայի և Անգղիայի բարե-  
կամութիւնը սլիտի սրահուի :

Հետագայ ոտանաւորը, Պօլիսի արուարձաններու  
մէկին մէջ ձեռքէ ձեռք կը սլալտի և մեծ հետաքրքրու-  
թիւն կը պատճառէ :

- Է՛ մէկ.....
- Ականջով երկայն
- Եւ զլիտով պղտի .
- Ապաւէն է այն
- Անտես բղեղի ,
- Որ միշտ կը կուտայ
- Եւ կարծել կուտայ
- Ինծի և քեզի
- Թէ հոն բան մը կայ
- Որ մեղ չ'երեւայ :
- Այն . այլ մի թէ
- Ամէն մարդ չիլտէ
- Զի ուր որդ բղղայ
- Նեխութիւն կ'եւայ :

Հ.

Համարատու Տըլէդը.

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.